Մրցույթ՝ ՀՀ ‹‹ Լոռու մարզի Վանաձորի №18 միջնակարգ դպրոց ›› ՊՈԱԿ-ի անգլերենի (8 դասաժամ), քիմիայի (8 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝
-դիմում (ձև 1),

-մեկ լուսանկար 3 x 4 չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-‹‹ Հանրակրթության մասին ›› ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 08-ից մինչև նոյեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00 –ից - 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 22-ին ՝ ժամը 14:00-ին , ՀՀ Լոռու մարզի Վանաձորի №18 դպրոցում : Հասցեն՝ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճ.151:

Տեղեկությունների համար զանգահարել (0322)3-78-09 հեռախոսահամարով: